

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 19/8

30 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Վահե Հարությունյանի 19.08.2014 թ-ի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի 10.04.2014 թ-ի թիվ 287 որոշման դեմ:

Ա/Ձ Վահե Հարությունյանի գանգատում բերված փաստարկները.

Համաձայն Կոտայքի ՏՀՏ պետի 10.04.2014 թ-ի թիվ 287 որոշման, Ա/Ձ Վահե Հարությունյանից ենթակա է գանձման 371.402 դրամ պարտադիր սոցիալական վճար, որից ապառք՝ 240.000 դրամ և չվճարված ապառքի նկատմամբ հաշվարկված տույժ՝ 131.402 դրամ:

Վերոհիշյալ պարտավորությունը 2009 թ-ի հունվարից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսների համար հաշվարկված նվազագույն սոցիալական վճարների գումարն է:

Վահե Հարությունյանը հանդիսացել է անհատ ձեռնարկատեր և 10.10.2000 թ-ին ստացել էմ թիվ 11.02430 պետական գրանցումը: Ընդամենը մի քանի ամսով 2000 թ-ին իրականացրել է մանրածախ առևտուր, որից հետո դադարեցրել է գործունեությունը, որից հետո երկար ժամանակով բացակայել Հայաստանից և վերադարձել է 2012 թ-ին:

2014 թ-ին Կոտայքի ՏՀՏ-ի կողմից ծանուցվել է և ներկայացել է հարկային տեսչության իրավաբանական բաժին, որտեղ հայտնել են հաստատագրված վճարի գծով 532 դրամ և սոցիալական վճարի գծով պարտավորության մասին:

Նկատի ունենալով, որ 2000 թ-ին աշխատել է հաստատագրված վճարով, ուստի իր կողմից վճարվել է այդ 532 դրամը, որը հավանաբար գործունեության դադարեցման արդյուքում առաջացած տարբերությունն է: Ինչ վերաբերվում է սոցիալական վճարին, ապա Ա/Ձ Վահե Հարությունյանը չի ընդունում այն հետևյալ պատճառաբանությամբ:

30.12.1997 թ-ի «Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 11.12.2002 թ-ի ՀՕ-476-Ն օրենքի 4-րդ հոդվածի դ) կետի համաձայն՝ 5-րդ մասի երկրորդ պարբերության առաջին նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Անհատ ձեռնարկատերերը (ձեռներեցները) պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար 5000 դրամ, մինչև հաջորդ ամսվա 15-ը»: Նույն օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից և տարածվում է 2003 թ-ի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Վերոհիշյալ օրենքի դրույթները վերլուծելով ստացվում է, որ անհատ ձեռնարկատերերը նվազագույն սոցիալական վճարների վճարման պարտավորությունը և լիազոր մարմնի կողմից հաշվարկումը առաջանում է 2003 թ-ի հունվարի 1-ից:

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2005 թ-ի նոյեմբերի 11-ին ընդունվել է «Անհատ ձեռնարկատերերի համար եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների արտոնություններ սահմանելու մասին» թիվ ՀՕ-215-Ն օրենքը, որի 1-ին հոդվածը սահմանում է՝ սույն օրենքը տարածվում է միայն եկամտահարկի և (կամ) պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների նվազագույն գումարների վճարման հետ կապված պարտավորություններ ունեցող անհատ ձեռնարկատերերի վրա: Օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է՝ Մինչև 2006 թ-ի մայիսի 1-ը հարկային մարմին գործունեությունը դադարեցնելու (լուծարվելու) վերաբերյալ գրավոր դիմում ներկայացրած (այդ թվում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագրերի հիման վրա) և պետական գրանցման վկայականը (այդ թվում՝ ժամկետային) հանձնած անհատ ձեռնարկատերերն